ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց քարտերից ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերին փոխանցումների

Հրապարակվել է՝ 16.03.2026թ.

Ուղարկող	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց քարտերի քարտապան
Ստացող	ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերի քարտապան
Բանկ	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ
Փոխանցման արժույթ	ՀՀ դրամ
Փոխանցման եղանակ	Բանկի վճարային www.most.vtb.am առցանց հարթակ
Փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն	• Ուղարկողի քարտի համար, • Ուղարկողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում), • Ստացողի քարտի համար, • Ստացողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում) • Փոխանցման գումար
Փոխանցման միջնորդավճար	1% (փոխանցման գումարից), նվազագույնը 200 ՀՀ դրամ:
1 փոխանցման նվազագույն գումար	100 ՀՀ դրամ
1 փոխանցման առավելագույն գումար	399,000 ՀՀ դրամ
Միևնույն քարտից փոխանցման օրական սահմանաչափ/քանակ	24 ժամվա ընթացքում առավելագույնը 399,000 ՀՀ դրամի 3 հատ փոխանցում
Ծառայության ռեժիմ	24/7
Փոխանցման տևողություն	մինչև 10 րոպե

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) վճարային www.most.vtb.am առցանց հարթակը Բանկի հաճախորդներին տալիս է հնարավորություն Բանկի կողմից թողարկված ֆիզիկակական անձանց քարտերից (այսուհետ՝ Ուղարկողի քարտ) կատարել առցանց փոխանցումներ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերին (Ստացողի Քարտ):

2. Ուղարկողը հավաստում է, որ մինչ փոխանցման կատարումը իր կողմից լրացված (Բանկին տրամադրված) բոլոր տվյալները ճշգրիտ են և հավաստի և տալիս է իր համաձայնությունը իր կողմից լրացված տվյալները ուղարկել Բանկ և այլ ֆինանսական կազմակերպություններին, որոնք մասնակցում են գործարքի մյուս կողմում:

3. Փոխանցում իրականացնելու համար Ուղարկողից պահանջվող տվյալներն են՝
- Ուղարկողի Քարտի համարը,
- Ուղարկողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում),
- ՀՀ բանկերի կողմից թողարկված Ստացողի քարտի համարը,
- Ստացողի անունը և ազգանունը լատինատառ (հայրանունը չի լրացվում),
- Փոխանցման գումարը ՀՀ դրամով:

4. Փոխանցման միջնորդավճարը վճարում է Ուղարկողը, որի մասին տեղեկանում է գործարքի պահին մինչև փոխանցման կատարումը:

5. Փոխանցումը հաստատելու համար Ուղարկողը Բանկին նախկինում տրամադրած իր բջջային հեռախոսահամարին ստանում է մեկանգամյա գաղտնաբառ: Մեկանգամյա գաղտնաբառը առցանց հարթակի համապատասխան դաշտում ճշգրիտ լրացման

դեպքում փոխանցման հրահանգը հաստատվում է:

6. Փոխանցման գործողությունը ավարտելուց հետո Ուղարկողը ստանում է գումարի փոխանցումը հավաստող անդորրագիր, որտեղ արտացոլվում են գումարի փոխանցման բոլոր վավերապայմանները:

7. Փոխանցման գործողությունը ավարտելուց հետո առավելագույնը 10 րոպեի ընթացքում փոխանցումը հաշվեգրվում է Ստացողի քարտին: Ստացողի քարտին չհաշվեգրվելու դեպքում փոխանցված գումարը և վճարված միջնորդավճարը հետադարձ գործարքով վերադարձվում է Ուղարկողի քարտին:

8. Փոխանցման տվյալները մեկանգամյա գաղտնաբառի հաստատումից հետո հնարավոր չէ հետ վերադարձնել/անվավեր ճանաչել:

9. Բանկը պատասխանատվություն չի կրում Ուղարկողի կողմից ստացողի քարտի համարի սխալ մուտքագրման արդյունքում այլ քարտապանի հաշվին գումարի հաշվերգրման համար:

10. Ուղարկողը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ տվյալների/տեղեկությունների պատշաճ պահպանությունն ապահովելու և դրանց՝ երրորդ անձանց հասանելիությունը կանխարգելելու և բացառելու ուղղությամբ:

11. Բանկը պատասխանատվություն չի կրում Ուղարկողի բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների արտահոսքի համար, եթե դա տեղի է ունեցել իր մեղքով կամ վերջինիս անփութության հետևանքով:

12. Բանկը պատասխանատվություն չի կրում Ուղարկողի կողմից ոչ վավեր կամ բլոկավորված կամ այլ կերպ գործողության մեջ սահմանափակված քարտով կամ քարտային հաշվով կատարվող գործառնության կասեցման կամ մերժման համար: Պետք է մինչև գործառնության կատարումը հավաստիանալ, որ

- Քարտի գործողության ժամկետը չի լրացել,
- քարտային հաշվին առկա է անհրաժեշտ չափով գումար,
- քարտը թողարկող բանկի կողմից առկա չեն քարտին կամ քարտային հաշվին դրված որևէ արգելանք կամ սահմանափակում,
- քարտը ֆիզիկապես գտնվում է Ձեզ մոտ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ԲԱՆԿԸ՝ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՐՈՂ Է ՀԱՃԱԽՈՐԴԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» ("KNOW YOUR CUSTOMER") ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ (ՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ):

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA)) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԸ ՁԵՐ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև վանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է https://www.fininfo.am/dramakan-poxancumner:

Սույն ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
Մանրամասների համար կարող եք վանգահարել 87-87 հեռախոսահամարով: